ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 186-Ա

28 մարտի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 8.1-րդ մասի 2-րդ կետով, 14.4-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի և 55-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 30-ի N2-9 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 26-ի N 35-Ա որոշումը

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պատվերով կատարված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը՝ տարածքային հատակագծման մասով:

28.03.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ